

ՀՏԴ 323

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՈՒ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՁԵՎԱԶԱՓԸ

ԿԱՏԵՐԻՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

Երևանի պետական համալսարան

Հոդվածում քննարկվում է քաղաքական ընտրանու (էլիտայի) հավաքագրումը, որը քաղաքական համակարգն ինստիտուցիոնալացնելու և արդիականացնելու գործընթաց է: Այս համատեքստում կարևորված են հավաքագրման ուղիներն ու կառուցակարգերը (մեխանիզմները), ինչպես նաև շրջապատույտը: Հիմք ընդունելով՝ որ քաղաքական ընտրանու հավաքագրումը նույն կերպ տեղի չի ունենում բոլոր պետություններում՝ մշակվել են մեկնաբանող ձևաչափեր (մոդելներ): Հանգամանորեն ներկայացվում է ձևավորված ընտրանիով քաղաքական համակարգի կայացման գործընթացը որպես քաղաքական արդիականացումից անցում արհեստավարժության: Փաստարկվում է մոտեցում, որ վերոնշյալ անցումը չհաղթահարած պետություններում քաղաքական ընտրանու հավաքագրման ուսումնասիրությունն անհրաժեշտ է իրականացնել կառուցվածքային, գործառույթային և արժեքանական փոփոխությունների առանցքում:

Բանալի բառեր. քաղաքական ընտրանի, ընտրանիների տեսություն, ընտրանու հավաքագրման ձևաչափ, հավաքագրման ուղիներ, ընտրանու շրջապատույտ, քաղաքական արդիականացում, քաղաքական կարիերա, անվանակարգ (նոմենկլատուրա), արհեստավարժություն, ամբոխահաճություն (պլյուրալիզմ):

Պետական քաղաքականության իրականացման առաջնային ինստիտուտ է քաղաքական ընտրանին և կարևոր է, թե ինչպես է այն ձևավորվում: Պետական քաղաքականության իրականացման նպատակամետությունն ու արդյունավետությունը ապահովող անհրաժեշտ պայմաններ են քաղաքական ընտրանու *հավաքագրման* ժողովրդավարական ինստիտուտներն ու գործընթացները, որոնք համակարգային կայունություն հաստատելու և այն ամրապնդելու հիմքեր են ստեղծում: Երկարաժամկետ կայուն զարգացում ակնկալել հնարավոր չէ առանց այդ պայմանով ձևավորված քաղաքական ընտրանու: Այն պետությունում, որտեղ քաղաքական ընտրանու ձևավորումն ավարտված չէ, Պարետյան «շրջափուլերի տեսության» համաձայն՝ ընտրանին կարող է հավաքագրվել տարբեր ձևաչափերով, այդ թվում հեղափոխական ճանապարհով: Անկախության հռչակումից և քաղաքական արդիականացման նոր ուղու անցնելուց հետո, քաղաքական ընտրանի ձևավորելու ժողովրդավարական հիմքեր

ստեղծվեցին հետխորհրդային անկախ պետություններում: Սակայն, ներքին և արտաքին բազում գործոնների ազդեցության ու խնդիրների պատճառով դրանց մի մասում քաղաքական ընտրանու ձևավորման գործընթացն ավարտված չէ առ այսօր: Սահմանադրաիրավական և քաղաքակրթական փոփոխությունները չեն կարողացել լիարժեք լուծել քաղաքականությունը և տնտեսությունը տարանջատելու, պետական շահերն անձնականին գերադասելու, արժանիքահենք համակարգ հաստատելու, քաղաքական պատասխանատվություն կրելու և այն գիտակցելու խնդիրները: Այդ պայմաններով քաղաքական ընտրանու հավաքագրումը քաղաքական արդիականացման անկայուն ճանապարհ է անցել (այդ թվում ՀՀ-ում)՝ ձևավորելով հիմնականում մոնոհիերարխիկ ընտրանի [1, ստ. 73-78]: Պոլիարխիկ քաղաքական ընտրանու ձևավորումը, մինչդեռ, պահանջում է քաղաքական ինստիտուտների արդիականացման շարունակականություն, քաղաքական հավաքագրման մրցակցություն, թափանցիկություն և համակարգային այլ հատկանիշներ: Քաղաքական արդիականացումը ենթադրում է ձևավորվող համակարգի կամ ինստիտուտի հարահոս հարմարում շարունակական ժողովրդավարական բարեփոխումների տրամաբանությամբ [2, էջ 45-46]: Այդ տրամաբանության մեջ տեղավորվում են սոցիալական կառուցվածքի, նորմատիվային և արժեքային համակարգերի բարեփոխումները, հաճախ նաև համակարգին ու հասարակությանը պարտադրված ինստիտուտներով: Ակնհայտ է, որ քաղաքական արդիականացումն ապահովում է զարգացում, ինչը, սակայն կարող է չհանգեցնել համակարգի լիարժեք կայացմանն ու ընտրանու ձևավորմանը: Կայացած համակարգին հատուկ են ինստիտուցիոնալ և ֆորմալ-իրավական հարաբերությունների բնույթը, քաղաքական ընտրանու արհեստավարժ և գիտելիքահենք հավաքագրումը, թարմացումն ու շրջապտույտը, ինչպես նաև հանրային բարձր գիտակցությունն ու քաղաքակրթական համընթաց վերափոխությունը (էվոլյուցիան): Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ քաղաքական ընտրանու հավաքագրման գործընթացը զարգացման (դինամիկայի) երկու փուլ ունի՝ **քաղաքական արդիականացման** (ժողորդավարացման) և **արհեստավարժության** (պրոֆեսիոնալիզմի) **հաստատման ու ամրապնդման**: Քաղաքական ընտրանու ձևավորման և կայացման համար անհրաժեշտ է համակցել արդիականացումն ու արհեստավարժությունը՝ ձևավորելով նոր դարաշրջանի պահանջներին համապատասխանող հավաքագրման ազգային ձևաչափ:

Քաղաքական ընտրանու հավաքագրման ձևաչափային ուսումնասիրությունը, ինչպես նաև իշխանության իրականացման մշակույթն ընդգրկվել են արդի քաղաքագիտական խոսույթում XIX դարի վերջից: Նշենք, որ քաղաքական արդիականացման դինամիկայի ուսումնասիրությունը

որոշակի ձևաչափի շրջանակում թույլ է տալիս գնահատելու հավաքագրման համակարգի դրական ու բացասական կողմերը, ընտրանու շարժունությունը (մոբիլությունը), խորությամբ հասկանալու քաղաքական ինստիտուտների և գործընթացների նմանություններն ու տարբերությունները: Անաչառորեն անհրաժեշտ է քաղաքական արդիականացման նույն փուլում գտնվող համակարգերի քաղաքական ընտրանու հավաքագրման ձևաչափերի ուսումնասիրությունն ու համեմատությունը: Սակայն բազմաթիվ օրինակներ փաստում են, որ զարգացման նույն փուլում գտնվող պետություններում տրանսֆորմացիայի ընթացքը կարող է փոխվել՝ արագանալ կամ դանդաղել: Հետխորհրդային պետություններում քաղաքական ընտրանու հավաքագրման ձևաչափերն ուսումնասիրող արևմտաեվրոպական և ամերիկյան հեղինակների կարծիքով, տրանսֆորմացիայի ընթացքը որոշողը ինստիտուտներն են, հավաքագրման ուղիներն ու կառուցակարգերը [3, pp. 9-11]: Այսպես, համակարգային խնդիրների առկայության պայմաններում ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունավետ իրականացմամբ տրանսֆորմացիայի ընթացքն արագացնելու փորձը հաջողությամբ պսակվեց Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) պետություններում: Խորհրդային համակարգի իներցիան պահպանած հետխորհրդային մյուս պետություններում այդ գործընթացը չհաջողվեց բազում, այդ թվում՝ ընտրանուն խմբերի դասավորության (կոնֆիգուրացիայի) պատճառով: Ավելին, հավաքագրման ուղիների և կառուցակարգերի բնույթն ու գործունակությունը պայմանավորված է նաև ընտրանու կառուցվածքային առանձնահատկություններով: Օսլոյի համալսարանի պրոֆեսոր Ա.Ստինն առաջնայնություն տալով ընտրանու հետազոտության կառուցվածքային կողմին նախ՝ վերլուծել է Ռուսաստանի քաղաքական ընտրանու կառուցվածքային մասերը, ապա վեր հանել, որ թեև ընտրանին դեյուրե կառուցվածքով քիչ է տարբերվում եվրոպական քաղաքական ընտրանիներից, ինստիտուցիոնալ կապերի թերարժեքության պայմաններում այն հավաքագրվում է փաստացի մեկ ուղով (իշխանական), պաշտոնական (ֆորմալ) և ոչ պաշտոնական (ոչ ֆորմալ) կառուցակարգերի գործադրմամբ կամ ինչպես ընդունված է անվանել ընտրանիների դասական տեսությունում՝ *փակ համակարգով* [4, pp. 35-37]: Քաղաքական ընտրանու հավաքագրման համակարգային փոփոխության տրամաբանությունը (համակարգը լինում է բաց և փակ) ևս իշխանության արդիականացման ձև է: Այն պետությունում, որտեղ տրանսֆորմացիայի ընթացքն ինստիտուտներով փոխելն արդյունավետ չէ, իրականացվում է համակարգային փոփոխություն:

Եթե դուրս գանք դասական տեսության տրամաբանությունից, ապա կտեսնենք, որ քաղաքական ընտրանու հավաքագրումը արդի պայմաններում կատարվում է հիմնականում «փակ համակարգով» (այսինքն՝ նեղ

սոցիալ-մասնագիտական խմբերից՝ կազմակերպված կառույցներով) և ընտրանի մտնելու հնարավորությունը սահմանափակված է հավաքագրման ուղիներով, թեկնածուներին ներկայացվող չափանիշներով: Ինչ վերաբերում է բաց համակարգով հավաքագրմանը, ապա այն բնութագրում են ինստիտուցիոնալ ուղիների բազմազանությունը, ժողովրդավարական ընթացակարգերի թափանցիկությունը և շատ այլ հատկանիշներ: Ինչպես նշել է ամերիկացի քաղաքագետ Հ. Լասսուելը, այսպես կոչված բաց կամ ժողովրդավարական ճանապարհով քաղաքական ընտրանու հավաքագրումը հասարակության կառավարման միակամ և դինամիկ եղանակն է, և թույլ է տալիս ձևավորել մրցունակ ու արհեստավարժ ընտրանի [5, pp. 32-35]: Մեկ այլ հեղինակ՝ ամերիկացի սոցիոլոգ Թ. Պարսոնսը՝ քննարկելով բաց համակարգի առավելությունը կառուցվածքային գործառույթային հայեցակարգում, նշել է, որ արևմտյան հասարակությունում ընտրանու կառուցվածքային տարրերը քաղաքական արդիականացման փուլում ձևավորվել են մասնագիտություններից [6, pp. 15-18]: Նույնատիպ պնդում է արել նաև ավստրիացի սոցիոլոգ Կ. Պոպպերը՝ բաց համակարգով քաղաքական ընտրանու հավաքագրման առավելությունների շարքում ընդգծելով ընտրանի տանող ինստիտուցիոնալ ուղիների բազմազանությունը, արհեստավարժության հիմքով կառուցակարգերը և ընտրանու սոցիալական շարժունության (մոբիլության) ապահովումը [7, стр. 218-220]: Քաղաքական ընտրանու շարժունության գնահատումը հնարավորություն է տալիս պարզելու, թե ինչպես են աշխատում «սոցիալական լիֆտերը»: Բանն այն է, որ միայն ուղղահայաց շարժունությունը (կարող է դիտարկվել օրինակ՝ կրթական ցենզը) բավարար չէ ընտրանու ձևավորման ու կայացման համար, և այն անհրաժեշտ է լրացնել նաև հորիզոնական շարժունությամբ: Հորիզոնական շարժունություն ասելով նկատի ունենք ոլորտային աշխատանքը, քաղաքական ինստիտուտներին և գործընթացներին ինտեգրված լինելը, օրինակ՝ կուսակցական աշխատանքի, հանրային ծառայության միջոցով: Առավելաբար ելնելով վերջին պնդումներից՝ կարելի է նշել, որ քաղաքական ընտրանու հավաքագրման ձևաչափերը տիպաբանվում են նախևառաջ ընտրանու կառուցվածքային և գործառույթային արդիականացման ուղեանիշներով, իսկ *հավաքագրման համակարգն* արտացոլում է գործընթացի ինստիտուցիոնալ և ժողովրդավարական պատկերը: Շարունակելով նախորդ միտքը, հավելենք, որ ցանկացած բաց համակարգ կարող է «փակվել», որի օրինակ է ԽՍՀՄ քաղաքական ընտրանին, ինչի վերաբերյալ ուսումնասիրությունը վերհանել է հետաքրքիր փաստեր: Այսպես, խորհրդային քաղաքական ընտրանիում սոցիալական ներկայացուցչության աստիճանը եղել է բարձր, չնայած ընտրանին հավաքագրվել է միայն կուսակցական ուղով՝ իշխող

մեկ գաղափարախոսության պայմաններում: Նոմենկլատուրայի (լատ. «nomenclatura» բառից, որը նշանակում է անվանակարգ) ձևավորումը (հիմնադրել է Վ. Լենինը, սակայն որպես ինստիտուտ կատարելագործել է Ի. Ստալինը) նվազեցրեց քաղաքական ընտրանու ուղղահայաց մոբիլությունը և տեղի ունեցավ քաղաքական ու կառավարչական ընտրանիների սերտաճում: Մինչև ԽՍՀՄ վերակառուցման շրջանը կուսակցական անվանակարգում հաշվվում էր 500.000 թվով մարդ, ներառյալ կուսակցության բոլոր մակարդակների ղեկավար պաշտոնյաները, 439.000 բյուրոյի անդամներ, կուսակցական կոմիտեների քարտուղարներ և այլն: ԽՄԿԿ անդամների 3%-ը կազմող անվանակարգը (նոմենկլատուրան) բաղկացած էր կուսակցական ֆունկցիոնարներից (գաղափարական) և կառավարչական ընտրանուց (տեխնոկրատիա), որի ձեռքում կենտրոնացած էր պետական իշխանությունը: Սկզբում քաղաքական ընտրանու հավաքագրման կուսակցական ուղին ապահովում էր սոցիալական լայն ներկայացուցչությունն ու շարժունությունը: Քաղաքական ընտրանու ներսում անվանակարգի (նոր ընտրանու) ձևավորումից հետո հորիզոնական շարժունությունը միակուսակցականության պայմաններում նպաստեց քաղաքական և կառավարչական ընտրանիների սերտաճմանն ու հավաքագրման անվանակարգային ձևաչափի հաստատմանը: Հետստալինյան շրջանում, ինչպես նշել է ռուս մասնագետ Ն. Վ. Ռաբոտյաժևը, անվանակարգային ձևաչափի փոփոխությանը նպաստել է քաղաքական և կառավարչական գործառույթների մասնակի տարանջատումը (ընտրանու կառուցվածքային և գործառույթային փոփոխություններ), որի շնորհիվ քաղաքական ընտրանին դարձավ համեմատաբար տարրասեռ (պետական բյուրոկրատիա, ՊԱԿ և այլն) [8, стр. 22]: Քաղաքական ընտրանու հավաքագրման խորհրդային ձևաչափի առանձնահատկությունը մեկնաբանելու համար, անհրաժեշտ է քննարկել նաև ընտրանու շրջապտույտի խնդիրը: Այն կարևորվում է իշխող քաղաքական ուժ-ընդդիմություն, տարբեր ընտրանիների (տնտեսական, ռազմական, ֆինանսական և այլն), ներընտրանու դերակատարների իշխանական պայքարի և մրցակցության ձևերի համատեքստում: Անվանակարգային ձևաչափով քաղաքական ընտրանու արատավոր շրջապտույտը հանգեցրեց ընտրանու աստիճանական կազմալուծման (դեգրադացման), որի պատճառով շրջապտույտի շուրջ այսօր ձևավորվել են կարծրատիպեր: Դրանք են.

ա) *Շրջապտույտը կոչված է ապահովելու ընտրանու ոչ մեծաքանակ (փոքրամասնության) ղեկավար պաշտոնների համար մարդկանց պատրաստելու և փոխարինելու խնդիրների լուծումը:* Գաղտնիք չէ, որ այդ պատճառով քաղաքական ընտրանու հավաքագրման ակտիվ փուլերը մի շարք երկրներում համընկել են ժողովրդական մեծ շարժումների, քաղաքական անկայուն գործընթացների ծավալման հետ: Բազում երկրներում

ընտրանին փոխելու այդ եղանակները բացասաբար են անդրադարձել քաղաքական համակարգի, իսկ վերջնարդյունքում նաև հավաքագրման գործընթացի նպատակի վրա: Ուստի անկայուն գործընթացներից խուսափելու և համակարգային անընդհատությունն ապահովելու համար շրջապտույտի նպատակը պետք է լինի սերնդափոխությունը:

բ) *Շրջապտույտը՝ որպես անընդհատ կրկնվող գործընթաց, ապահովում է քաղաքական ընտրանու թարմացումն ու շարժունությունը:* Ի գիտություն ընդունելով, որ շրջապտույտի ներքո կարող է տեղի ունենալ վերարտադրություն (ԽՍՀՄ օրինակը), հարկ է նշել **օբյեկտիվ շրջապտույտի** կարևորությունը: Շրջապտույտն օբյեկտիվ բնույթ ունի, երբ առկա է մրցակցություն քաղաքական ու պետական համակարգում: Ուստի, քաղաքական ընտրանու հավաքագրումը օբյեկտիվ շրջապտույտի և բաց համակարգի միջոցով ապահովում է օրենքի ուժով անարդյունավետ քաղաքական ընտրանին փոփոխելու իրավունքի իրականացումը: Հետխորհրդային որոշ պետությունների օրինակներ փաստում են, որ օբյեկտիվ շրջապտույտի բացակայության պատճառով քաղաքական ընտրանու հավաքագրումը հնարավոր է եղել հեղափոխական ճանապարհով: Այդ ճանապարհով են անցել Վրաստանը, Մոլդովան, Ուկրաինան: Հեղափոխությունները, ինչպես նշում է Պ. Ռուֆանդը, թարմացրել են քաղաքական ընտրանին, մեղմացրել կամ վերացրել ընտրանու և սոցիալական տարբեր շերտերի միջև անհավասարությունը: Հաջողվել է կերտել քաղաքական համակարգ, որում ընդդիմությունը խաղաղ ճանապարհով կարողացել է գալ իշխանության (Վրաստան): Բոլոր դրական փոփոխությունները հաշվի առնելով, քաղաքական համակարգն այդ պետություններում լիարժեք կայացած չէ, ինչի համար դրանք դեռևս «անկայուն» ժողովրդավարական պետություններ են համարվում [9, p. 2]: Ավելին, դրանց չի հաջողվել մարմնավորել քաղաքական ընտրանու արդի ձևաչափով հավաքագրվող հաջողած պետության կերպարը:

Քաղաքական ընտրանու հավաքագրումն օբյեկտիվ շրջապտույտի և բաց համակարգի տրամաբանությամբ բավարար չէ ընտրանու լիարժեք ձևավորման և համակարգի կայացման համար: Դրանք քաղաքական արդիականացման անհրաժեշտ պայմաններ են, սակայն որպեսզի համակարգը գործարկվի արհեստավարժության սկզբունքով, հարկավոր է դուրս գալ «կառուցելու» տրամաբանությունից և գործել արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ինչն անհնար է առանց ինստիտուցիոնալ ամուր հիմքերի: Ազատական-ժողովրդավարական պետությունում արհեստավարժ քաղաքական ընտրանու հավաքագրման ձևաչափերը երկուսն են՝ **դասական** (կուսակցական) և **պլուրալիստական** (կուսակ-

ցությունից բացի ակտիվ դերակատարություն ունեն հանրային ծառայության ինստիտուտը, քաղաքացիական հարթակները): Ընդհանուր առմամբ, երկուսն էլ ունեն նույն տրամաբանությունը, ըստ որի, քաղաքականությունը մասնագիտական գործունեության դաշտ է և դրա ընտրանին հավաքագրվում է ժողովրդավարական կայուն կառուցակարգով, անհատական և մասնագիտական որակներ կրող մարդկանցից, որոնց «գտում» են կայացած ինստիտուտները: Ձևաչափերը տարբերվում են հիմնականում կարիերայի և հավաքագրման հարթակների (recruitment pool) չափումներով: Առաջին՝ դասական ձևաչափով են հավաքագրվում օրինակ՝ արևմտաեվրոպական պետությունների քաղաքական ընտրանիները (Ֆրանսիայում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում): Ինչպես պնդում է գերմանացի սոցիոլոգ Մ. Հարթմանը, քաղաքական ընտրանին այս ձևաչափով հավաքագրվում է քաղաքական և պետական մարմիններին մշտապես ինտեգրված լինելու, մասնագիտական գիտելիքներ ու արհեստավարժություն ունեցող թեկնածուներից: Օրինակ՝ Ֆրանսիայում քաղաքականությունն ու կառավարումը սերտորեն փոխկապակցված են, որը վկայում է, որ հաջող քաղաքական կարիերան պահանջում է նաև պետական ոլորտային աշխատանք: Առանց այդ երկու բաղադրիչների քաղաքական ընտրանի հավաքագրվելու հավանականությունը գնահատվում է ցածր (տե՛ս օրինակ՝ է. Մակրոնի քաղաքական կարիերայի պատմությունը): Մյուսին՝ Գերմանիային, հատկանշական է «դանդաղ» քաղաքական կարիերայի կառուցակարգը, որով ընտրանին հավաքագրվում է մտավոր և բարոյական հասունացման ճանապարհ անցած թեկնածուներից (այսինքն՝ տեղական կառավարման մակարդակից կարիերային աստիճանական շարժը դեպի քաղաքական ու պետական բարձր պաշտոնների): Քաղաքական կարիերայի կառուցման ձևով (և ոչ միայն) Ֆրանսիայից ու Գերմանիայից տարբերվում է Մեծ Բրիտանիան, որտեղ առաջնային կարևորվում է արդյունավետ աշխատանքը կուսակցության շարքերում: Ըստ այդմ՝ քաղաքական ընտրանի հավաքագրվելու հավանականությունը մեծ է այն թեկնածուների համար, ովքեր ակտիվ և արդյունավետ աշխատում են կուսակցության ներսում՝ վաստակելով հեղինակություն և ազդեցություն: Նշված պետություններում, սահմանադրական տարբերությունները հաշվի առնելով՝ քաղաքական կարիերայի կառուցման կարգը ինստիտուցիոնալացված է և առաջնայնությունը տրվում է քաղաքական ինստիտուտներին: Հավաքագրման գործընթացը բնութագրում են նաև ուղղահայաց և հորիզոնական բարձր շարժունությունը, շրջապտույտը, այսինքն՝ քաղաքական ընտրանիների փոփոխելիությունը: Բացառված չեն ընտրանիների փոխներթափանցման հնարավորությունները, սակայն կայացած ինստիտուցիոնալ համակարգը կանխում է ընտրանու տարբեր մասերի սերտաճումը՝ խթանելով ներընտրանուն և հասարակության տարբեր ընտրանիների

հետ համագործակցությունը [10, էջ 32-33]: *Պյուրալիստական ձևաչափը* դասականից տարբերվում է քաղաքական կարիերայի, քաղաքական մշակույթի առանձնահատկություններով և հավաքագրման լայն հարթակներից ընտրանու ձևավորման պրակտիկայով: Պյուրալիստական ձևաչափում (դասական օրինակ՝ ԱՄՆ) հավաքագրումը չի սահմանափակվում միայն համակարգային ինստիտուտներով և ընտրանու թեկնածուներ առաջադրող հարթակները շատ են (գործարարություն, քաղաքացիական հասարակություն, շահերի խմբեր և այլն): Այդ մասին փաստում է XX դարի 80-ականներին ԱՄՆ քաղաքական ընտրանու ուսումնասիրություններով հայտնի փորձագետ Թ.Դայը՝ կարևորելով քաղաքականությամբ զբաղվելու իրավունքի լիարժեք իրականացման հնարավորության ապահովումը [11, էջ 191]: Հավաքագրման լայն հարթակներ ունենալուն և քաղաքականության մեջ համագործակցության մշակույթ ձևավորելուն նպաստել է սոցիալական կապերի ու հարաբերությունների ցանցային համակարգը, որն արդեն վաղուց ամրապնդվել է ԱՄՆ-ում: Տարբեր հանրային հարթակներից ընտրանու թեկնածուների հավաքագրումը չի բացառվում, քանի որ քաղաքականությունն ընկալվում է որպես հնարավորի արվեստ, որը չի կարող ենթարկվել սահմանափակումների: Ցանցային կապերն ապահովող կառուցակարգը մրցակցային է, ունի ինստիտուցիոնալ հիմքեր և երաշխավորում է համակարգի կայունությունը: Ամերիկացի պրոֆեսոր Մ. Ուրբանի խոսքերով, կայուն ժողովրդավարական և ինստիտուցիոնալ ամուր հիմքեր ունեցող համակարգում ցանցերի ստեղծումը կատարում է «խաղի կանոնները» անխախտ պահելու գործառույթը [12, p. 26]: Թերևս այդ պատճառով ԱՄՆ քաղաքական ընտրանին մշտապես հավաքագրվում է երկու քաղաքական կուսակցություններից: Մինչդեռ, ինստիտուցիոնալ թույլ հիմքեր ունեցող և ոչ մրցակցային համակարգում ցանցերը կառուցվում են անձնավորված հարաբերությունների միջոցով՝ անձնական նվիրվածության, հուզական կապի (emotional ties) հաստատման սկզբունքներով, իսկ շրջապտույտի փոխարեն, որպես կանոն, տեղի է ունենում վերարտադրություն [13, pp. 773-787]: Վերը քննարկվող երկու ձևաչափերում, ինչպես տեսնում ենք, կարևորվում են մրցակցությունը, ինստիտուցիոնալացումը, արհեստավարժությունը, որոնց գերակայությունը ապահովվում է մի շարք օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերով: Այսպես՝ Գերմանիայի և Ֆրանսիայի ընտրական գործընթացների և քաղաքականության մասին օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ պետությունը խրախուսում է կուսակցությունների ակտիվ գործունեությունը տարբեր միջոցներով, այդ թվում՝ լրահատկացումներ (սուբսիդիաներ) տալու եղանակով: Մեծ Բրիտանիայում լրահատկացումներ են

տրամադրվում անգամ քաղաքականության ոլորտում հետազոտություններ կատարելու համար: Միևնույն ժամանակ, բոլոր արտոնությունների, ինչպես նաև քաղաքական կարիերայի ու մասնակցության, հիմքում դրված է համակարգի ռացիոնալացման խնդիրը: Դա նշանակում է, որ օրենսդրությունը չի սահմանափակում և մղում է աշխատանքի՝ կուսակցությունը դիտելով որպես արհեստավարժ ինստիտուտ, որն ունի քաղաքական ընտրանու թեկնածուներ գեներացնող ձևավորված կուսակցական ապարատ, լավ կազմակերպված կառուցվածքային միավորներ, կադրային դպրոցներ: Ռացիոնալ ինստիտուցիոնալ համակարգի տեսանկյունից հետաքրքիր փորձ ունի հատկապես Գերմանիան, որտեղ ազդեցիկ կուսակցությունների կողքին քաղաքական մրցապայքարի են դուրս գալիս նույնիսկ փոքր կուսակցությունները: Վերջինները երբեմն լուրջ հաջողություններ են գրանցում տեղական ընտրություններում, քանի որ կուսակցությունները մրցակցում են պետական քաղաքականության իրականացման ծրագրային ու գաղափարական տարբեր մոտեցումներով [14, p. 35]: Ինչ վերաբերում է կուսակցության կադրային քաղաքականության ռացիոնալությանը, ապա պատասխանատու յուրօրինակ կառուցակարգով է քաղաքական ընտրանու թեկնածուների հավաքագրումն իրականացվում Մեծ Բրիտանիայում: Մասնավորապես բրիտանական խորհրդարանում 2001 թվականից գործում է Խորհրդարանի գնահատման պալատը (The Parliament Assessment Board (PAB)), որը զբաղվում է կուսակցական թեկնածուների գնահատման և ինստիտուցիոնալ վերահսկողության աշխատանքով [15, p. 15]: Քաղաքական ընտրանու հավաքագրման դասական և ամբոխահաճության ձևաչափերում կիրարկվող ինստիտուցիոնալ և արհեստավարժ կառուցակարգերը ապահովում են կայուն ժողովրդավարություն, անցնելով իշխանափոխություն:

Չարևմտականացված (չվեստերնիզացված) համակարգ ունեցող պետության քաղաքական ընտրանին, ի թիվս թույլ ինստիտուցիոնալ հիմքերի և այլ խնդիրների, հավաքագրվում է նաև ոչ ֆորմալ ինստիտուտներից, անկանոն և հարափոփոխ կարիերային ու կադրային կառուցակարգերով: Ֆորմալ ու ոչ ֆորմալ ինստիտուտներով քաղաքական ընտրանու հավաքագրումը գործնականում շատ է հանդիպում կառուցվածքայնորեն տարբերակված, սակայն գաղափարապես ինտեգրված ընտրանու համակարգում: Մերձավորարևելյան պետությունների քաղաքական ընտրանու հետազոտությամբ զբաղվող Ե. Պ. Ռակելի կարծիքով, դրանցում հստակ տեսանելի են քաղաքական ընտրանու ֆորմալ և ոչ ֆորմալ բաղադրիչները: Օրինակ՝ Իրանի Իսլամական Հանրապետությունում ֆորմալ բաղադրիչը կազմում են Հոգևոր բարձրագույն մարմինը (երկրի հոգևոր առաջնորդն ու նրա շրջապատը), հանրապետական մարմինները (գործադիր, օրենս-

դիր, դատական), կրոնական կառույցները (բարեգործական միություններ, որոնք ղեկավարում են գերագույն հոգևոր առաջնորդի նշանակած տեղական մակարդակի ներկայացուցիչները): Ոչ ֆորմալ քաղաքացիք տարբեր քաղաքական խմբակցություններն են, որոնք Իրանի քաղաքական համակարգում փոխարինում են քաղաքական կուսակցություններին: Ի դեպ դրանց շրջանակներից են հավաքագրվել քաղաքական ընտրանու մի շարք հայտնի գործիչներ, ինչպես օրինակ նախկին նախագահ Մ. Ահմադինեժադը: Քաղաքական խմբակցությունների գործունեության ինստիտուցիոնալ հիմքերի բացակայությունից կարելի է ենթադրել, որ հավաքագրումն իրականացվում է հիմնականում անձնական կապերի (շրջապատ) և նեպոտիզմի հիման վրա [16, pp. 50-52]: Այդ սկզբունքներով քաղաքական ընտրանու հավաքագրման պրակտիկան հանդիպում է նաև ԱՊՀ անդամ-պետություններում: Խորհրդային կարգի վերացումից հետո ԱՊՀ պետությունների քաղաքական ընտրանիները կրել են կառուցվածքային և արժեքանական փոփոխություններ, սակայն ընտրանու ձևավորման գործընթացն, ընդհանուր առմամբ, անավարտ է մնացել [17, pp. 136-137]: Հրաժարվելով անվանակարգային ձևաչափից՝ քաղաքական ընտրանու հավաքագրման նոր ձևաչափին չի հաջողվել քաղաքական արդիականացման փուլից սահուն անցում կատարել արհեստավարժ համակարգի: Հավաքագրման ձևաչափը, որն ընդունված է անվանել **խառը** (այսինքն՝ ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտներով) հաստատել է հիբրիդային վարչակարգերը: Հիբրիդային վարչակարգ ունեցող պետությանը հատկանշական են մասնակի ազատ ՁԼՄ-ների, մասնակի պլուրալիզմի, քաղաքական ընդդիմության փոքրաթիվ ներկայացուցչությունը խորհրդարանում և համակարգային այլ հատկանիշներ [18, pp. 471-472]: Խառը ձևաչափին հատկանշական է նաև քաղաքականությամբ զբաղվելու մոտիվացիոն դրդապատճառների աղավաղումը, երբ քաղաքական ընտրանու հավաքագրման կառուցակարգի հիմքում դրված չեն գործառույթային և արժեքային կողմնորոշումները, կամ արհեստավարժությունը, այլ անձնական նվիրվածությունը, անձնական շահը: Խառը ձևաչափի այս կամ այն գծեր բնորոշ են եղել նաև ՀՀ-ում քաղաքական ընտրանու հավաքագրմանը: Հավաքագրման համակարգային հատկանիշների թվում կարելի նշել ընտրանի տանող ուղիների սահմանափակությունը, կլանային օլիգարխիկ կապերը, աննշան ուղղահայաց և հորիզոնական շարժունությունը: Հավաքագրման ուղղահայաց և հորիզոնական մոբիլությունը չեն ակտիվացրել նույնիսկ սահմանադրաիրավական, ընտրակարգի փոփոխությունները: Քաղաքական արդիականացումն արգելակել են բազմաթիվ գործոններ, այդ թվում ամուր իշխանական ցանցերի ստեղծումը [19, p.42]: Ցանցերն ապահովել են ներընտրանու բարձր ինտեգրվածություն, որով գրեթե բացառվել է քաղաքական ընտրանու օբյեկտիվ շրջապտույտը: Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ հավաքագրման կառուցակարգը

կառավարման տարբեր շրջափուլերում որոշակիորեն փոփոխվել է (շրջափուլերը կապված են երեք նախագահների ղեկավարման ժամանակաշրջանի հետ): Այսպես օրինակ՝ տեր պետրոսյանական ընտրանին անվանակարգային ձևաչափով հավաքագրված ընտրանի էր՝ կազմված կրթական բարձր ցենզ ունեցող կադրերից: Քոչարյանական ընտրանին հավաքագրվել էր տնտեսական, տեխնոկրատական և բարձրաստիճան զինվորականության շերտերից՝ քիչ թե շատ ապահովվելով ներկայացվածություն հասարակության ազդեցիկ շրջանակներից, սփյուռքից: Սարգսյանական քաղաքական ընտրանու հավաքագրման գերակա ուղին էր կուսակցությունը [20, րր. 37-48]: Անհերքելի է սակայն, որ շրջափուլերի տարբերություններով հանդերձ, քաղաքական ընտրանու հավաքագրումը վերջին երկուսի դեպքում հատկապես, իրականացվել է խառը ձևաչափով և քաղաքական ընտրանու օբյեկտիվ շրջապտոյտ տեղի չի ունեցել: Ավելին այդ իրողությունը հաստատելու է գալիս այն, որ կառավարող քաղաքականօլիգարխիկ ընտրանու ներսում իշխանության ռեսուրսի ցիրկույացիան ու անփոխարինելիությունը տարան պետությունը քաղաքական համակարգի ճգնաժամի [21, սր. 80-98]: 2018 թվականին ՀՀ-ում տեղի ունեցած թավշյա հեղափոխության արդյունքում հավաքագրվեց նոր քաղաքական ընտրանի: Հեղափոխական ալիքի վրա կազմավորված քաղաքական ընտրանու կազմը, ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, սոցիալական և մասնագիտական առումով տարբեր էր նախորդներից: Քաղաքական ընտրանին երիտասարդացել է (պատգամավորների միջին տարիքը թվերով ունի հետևյալ պատկերը. 35-ից ցածր՝ 46 պատգամավոր, 35-45 տարեկան՝ 54 պատգամավոր, 45-ից բարձր 32 պատգամավոր): Աճել է կանանց ներկայացվածությունը քաղաքական ընտրանիում («Իմ քայլը» խմբակցությունում 23-ն են, ԲՀԿ-ում՝ 5, ԼՀԿ-ում՝ 4) [22, էջ 18-19]: 2019 թվականի դեկտեմբերյան արտահերթ ընտրություններից հետո ՀՀ քաղաքական համակարգը թևակոխեց համակարգային ու ինստիտուցիոնալ բարեփոխումների նոր շրջափուլ: Ընտրություններին ընդառաջ իրականացվեցին ընտրական օրենսդրության բարեփոխումներ, մասնավորապես ընդունվեց ընտրակաշառքը քրեականացնող օրենքը: Քաղաքական ընտրանու մոբիլությունը բարձրացնելու նպատակով առաջարկվեց իջեցնել ընտրական շեմը կուսակցությունների համար, որը նաև բազմակուսակցական խորհրդարան ձևավորելուն միտված քայլ էր: Սակայն, գործող խորհրդարանի քվեարկության արդյունքներով փոփոխությունը մերժվեց [23]: Այդուհանդերձ, կուսակցական և բյուրոկրատական մարմիններում կատարվել է որոշակի սերնդափոխություն (օրինակ՝ քաղաքական դաշտում հայտնվել են նոր ակտորներ, իսկ պետական կառավարման համակարգում սերնդափոխության նպատակով իրականացվել են կառուցվածքային ու գործառույթային փոփոխություններ): Կուսակցությունների մի մասը հայտարարել է ռեբրենդինգի, գործունեության և ծրագրերի

վերարժևորման մասին: Նշված շոշափելի փոփոխություններով հանդերձ՝ երկրում ակտուալ է մնում ինստիտուցիոնալ արդիականացման խնդիրը, որովհետև ընտրությունները չեն կարող առանցքային նշանակություն ունենալ լիարժեք չձևավորված համակարգի արդյունավետ կառավարման համար: Քաղաքական ընտրանու հավաքագրման առաջնային ինստիտուտների արդիականացումն անհրաժեշտ է օլիգարխիաների ձևավորումը կանխելու, համակարգի կազմակերպական զարգացման և քաղաքակրթական անհամաչափությունը վերացնելու համար: Այս համատեքստում կարևորվում է հատկապես քաղաքական ընտրանու հավաքագրման ձևաչափի շրջանակներում իրականացվող կադրային քաղաքականության իրականացումը, որը արհեստավարժությունը կդարձնի ընտրանու հավաքագրման գլխավոր չափանիշը:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ լիարժեք ձևավորված քաղաքական ընտրանի ունենալու, կայուն ինստիտուցիոնալ հիմքերով այն հավաքագրելու համար անհրաժեշտ է.

- ստեղծել քաղաքական ընտրանու հավաքագրման ազգային ձևաչափ, հնարավոր է արդի ձևաչափերի համակցության և արհեստավարժ կառուցակարգերի կիրարկման միջոցով,

- ընդլայնել հավաքագրման արհեստավարժ ուղիները, որը հանգեցնելու է քաղաքական ընտրանու մոբիլության բարձրացման և օբյեկտիվ շրջապտույտի լիարժեք իրականացման,

- գերակա համարելով ուղղահայաց մոբիլությունը՝ զարգացնել նաև քաղաքական ընտրանու հավաքագրման հորիզոնական կողմը՝ «լավագույն ուղեղներին» գտնելու ու դանդաղ կարիերային պրակտիկան զարգացնելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Алтунян К.**, Проблема рекрутирования и эффективности политической элиты, Междисциплинарный научно-практический журнал «СОТИС», Изд. «Наука», 5(91) август-сентябрь, Москва, 2018, с. 73-78.

2. **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումը՝ որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք, մարտ 30, 2018: <https://mmmargaryan.wordpress.com>

3. **Abbink J., Salverda T.**, The Anthropology of Elites: Power, Culture and Distinction, Palgrave MacMillan, New York, 2013, p. 9-11.

4. **Steen A.**, Political Elites and the New Russia: The Power Basis of Yelsin's and Putin's Regimes, Taylor & Francis e-Library, BASEES/Routledge Curzon Series on Russian and East European Studies, USA and Canada, 2004.

5. **Lasswell H. D.**, Politics: Who Gets What, When, How, Literary Licensing LLC, New York, 2011, 274 p.

6. **Parsons T.**, The Social System, ed. by Bryan S. Turner, Taylor & Francis e-Library, 2nd ed., 2005, p. 15-18.

7. **Поппер К. Р.**, Открытое общество и его враги, Т. 1, Москва, 1992, р. 218-220.

8. **Работяжев Н. В.**, Механизмы рекрутирования и воспроизводство политической элиты в посткоммунистической России, с. 22 <http://ecsocman.hse.ru/data/673/685/1219/003Rabotyazhev.pdf>:

9. **Rutland P.**, Russian's Post-Soviet Elite, 2016.

10. **Hartmann M., Routledge T., Group F.**, The Sociology of Elites, by Routledge, London and New York, 2007.

11. **Дай Р. Т., Зиглер А. Г.**, Демократия для элиты. Введение в американскую политику, Москва, 1984, 320 стр.

12. **Urban M.**, Cultures of Power in Post-Communist Russia: An Analysis of Elite Political Discourse, Cambridge Univ. Press, Santa Cruz, 2010.

13. **Reilly B., Nordlund P.**, Political Parties in Conflict-Prone Societies: Regulation, Engineering and Democratic Development, Centre for Democratic Institutions (CDI), International Institute for Democracy and Electoral Assistance, UNU, 2008.

14. **Castells M.**, A Network Theory of Power, International Journal of Communication 5, 2011.

15. **Williams R., Paun A.**, Party People: How Do- and How-Should British Political Parties Select their Parliamentary Candidates?, Institute for Government, London, 2011.

16. **Rakel E. P.**, The Iranian Political Elite, State and Society Relations, and Foreign Relations Since the Islamic Revolution, Univ. van Amsterdam, Düren, Duitsland, 2008.

17. **Gaman-Golutvina O.**, Political Elites in CIS: Recruitment and Rotation Tendencies, Comparative Sociology 6, 2007.

18. **Iskandaryan A.**, The Velvet Revolution in Armenia: How to Lose Power in Two Weeks, Demokrasiya: The Journal of Post-Soviet Democratization 26:4, 2018.

19. **Iskandaryan A., Mikaelian H., Minasyan S.**, War, Business and Politics: Informal Networks and Formal Institutions in Armenia, Caucasus Institute, ASCN, Yerevan, 2016.

20. **Ghaplanyan I.** Post-Soviet Armenia: The New National Elite and the New National Narrative, by Routledge, London and New York, 2018.

21. **Атанесян А. В.**, “Бархатная революция” в Армении: Потенциал, достижения и риски политико-протестной активности, Polis, Political Studies, No 6, 2018.

22. ԱԺ մոնիթորինգ, 7-րդ գումարում, 1-ին նստաշրջան, 1-ին զեկույց, Երևան, 2019:

23. Ընտրական օրենսգրքի փոփոխությունների ընդունումը տապալվեց երկրորդ անգամ, հոկտեմբեր 29, 2019;
<https://www.azatutyun.am/a/29569870.html> :

МОДЕЛЬ РЕКРУТИРОВАНИЯ ПОЛИТИЧЕСКОЙ ЭЛИТЫ

КАТЕРИНА АЛТУНЯН

Երևանский государственный университет

В статье рассматривается рекрутирование политической элиты, что является процессом институционализации и модернизации политической системы. Подчеркивается важность путей и механизмов рекрутирования, а также ротация элиты. Исходя из того, что процесс рекрутирования политической элиты не одинаков во всех странах, были разработаны модели. Процесс формирования политической элиты представлен как процесс перехода от политической модернизации к профессионализму. Утверждается, что в странах, которые не преодолели вышеупомянутый переходный период, исследование рекрутирования политической элиты должно проводиться в основе структурных, функциональных и ценностных изменений. Соответственно, подчеркивается важность институциональных механизмов рекрутирования, разнообразия путей и построения политической карьеры, профессионализм политической элиты в целях предотвращения системных потрясений и установления устойчивой демократии.

Ключевые слова: политическая элита, теория элиты, модель найма элиты, пути найма, ротация элиты, политическая модернизация, политическая карьера, номенклатура, профессионализм, плюрализм.

THE MODEL OF POLITICAL ELITE RECRUITMENT

KATERINA ALTUNYAN

Yerevan State University

The article discusses the recruitment of the political elite as a process of institutionalization and modernization of the political system. In this context, the study focuses on the paths and mechanisms of recruitment, as well as circulation. As the recruitment of the political elite is not the same in all countries, recruitment models have been developed. Observing the formation of the political elite, the recruitment process is presented as a transition from the political modernization to professionalism. It is argued that the study of the recruitment process of the political elite in countries that have not overcome the mentioned transition should be held in the framework of structural, functional and value changes. Accordingly, the specifics of institutional mechanisms, diversity of paths, and political career building are highlighted as important components of the professional political elite in order to prevent the systemic shocks and establish sustainable democracy.

Keywords: political elite, elite theory, elite recruitment model, recruitment paths, elite rotation, political modernization, political career, nomenclature, professionalism, pluralism.

*Ներկայացվել է խմբագրություն 20.02.2020
Երաշխավորվել է տպագրության 14.03.2020*